ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ՍԱՄՎԵԼԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎՐԱ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռուզաննա Համբարձումի Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ Միքայելի Ավանեսյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լիդա Ռազմիկի Արամյան

Առաջատար կազմակերպություն Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ.-ի հուլիսի 18-ին, ժամը՝ 11:30-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2024թ. հունիսի 18-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջերս տարբեր ոլորտի մասնագետներ ավելի ու ավելի հաճախ են բարձրացնում 21-րդ դարի երիտասարդների սոցիալ-հոգեբանական խնդիրների և նույնիսկ՝ երիտասարդության յուրահատուկ ճգնաժամի հիմնահարցը: Սոցիալական սպասումները, որոնք ներառում են սոցիալական նորմերը, մշակութային չափանիշները և միջանձնային համեմատությունները, ծառայում են որպես ուղեցույց, որով մարդիկ գնահատում են իրենց սեփական վարքը, ձեռքբերումները և ինքնարժևորումը: Երիտասարդների նպատակների սահմանման, սոցիալական պասումների և ինքնագնահատականի միջև փոխհարաբերությունները կարևոր հետևանքներ ունեն հասարակության համար, մասնավորապես առողջ ինքնագնահատական ունեցող երիտասարդներն ավելի հաճախ են դնում հավակնոտ նպատակներ և վստահորեն հասնում դրանց: Դրական ինքնագնահատականը խթանելով՝ հասարակությունը նպաստում է երիտասարդների ներուժի իրացմանը՝ նորարարության, ստեղծագործելու և տարբեր ոլորտներում նշանակալի ներդրում ունենալու համար: Երբ երիտասարդներն իրենց ունակ են զգում հասնելու իրենց նպատակներին՝ չնայած սոցիալական ճնշմանը, դա խթանում է ինքնավարության և ազատության զգացումը, որն էլ իր հերթին խթանում է սոցիալական համախմբվածությունը՝ խրախուսելով տեսակետների բազմազանությունը, համագործակցությունը և փոխադարձ հարգանքը տարբեր սոցիալական խմբերում:

Երիտասարդների սոցիալ-տնտեսական կարգավիճակը հաճախ բախվում է նպատակներ դնելու և հասնելու ունակության, ինչպես նաև ռեսուրսների և օժանդակ համակարգերի հասանելիության հետ: Անդրադառնալով երիտասարդների ինքնագնահատականի վրա ազդող գործոններին, ինչպիսիք են սոցիալական պասումները և համակարգային խոչընդոտները, հասարակությունը կարող է աշխատել՝ նվազեցնելու անհավասարությունը և խթանելու սոցիալական մոբիլությունը: Ընդհանուր առմամբ, աջակցող միջավայրի ստեղծումը, որը խրախուսում է առողջ նպատակադրումը և բարձրացնում երիտասարդների ինքնագնահատականը, օգնում է ստեղծել ավելի կայուն, համախմբված և բարգավաճ հասարակություն:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Նպատակային դիրքորոշում հասկացությունը գրականության մեջ քիչ ուշադրության է արժանացել, մասնավորապես այս հասկացությունը տեղ է գտել Ա. Ա. Ասմոլովի՝ դիրքորոշման տեսության մեջ: Սակայն դրա բովանդակային և կառուցվածքագործառութային առանձնահատկությունների մասին քիչ ուսումնասիրություններ և հրապարակումներ կան: Այնուամենայիվ ամերիկյան գրականության մեջ հանդիպում են որոշակի հետազոտություններ և տեսական հայեցակարգեր, որոնք այս կամ այն կերպ մեկնաբանում են նպատակային դիրքորոշումների կառուցվածքային մեխանիզմները, ձևավորման առանձնահատկությունները և դրսևորումները կյանքի կոնկրետ իրավիճակներում:

Սոցիալական սպասումներ հասկացության վերաբերյալ կան բազմաթիվ տարակարծություններ, որոնք մասնավորապես ծագել են հասկացության՝ ոչ միանշանակ ընկալման արդյունքում, այսպես՝ սպասում հասկացության փոխարեն՝ որպես համարժեքներ տարբեր հեղինակների կողմից տարբեր անուններ են տրվել, այսպես՝ ավելի խորը ուսումնասիրելու պարագայում համոզվում ենք, որ սպասումներ հասկացությունը գործնականում փոխարինվում է այլ համարժեքներով, ինչպիսիք են ակնկալիքները, կենսական հեռանկարները, կանխատեսումը, անտիցիպացիան, ինքնաիրականացվող մարգարեություն, վարքային վերագրումը, վարքային ինտենցիաները (Զիմբարդո, Լյաիպե) և վերջապես էքսպեկտացիան, որից եզրակացնում ենք, որ փաստորեն, սպասումների ոլորտի ուսումնասիրությունները բազմազան են և բազմապրոֆիլ և թերևս ոչ միանշանակ ընկալելի մասնագետների շրջանում, թեկուզ այն պատճառով, որ մի դեպքում սպասումները բացահայտվում են դիրքորորոշումների համատեքստում (Վրում, Ատկինսոն), ոմանք՝ գործողությունների, մանկավարժության և կրթության մեջ՝ որպես անձի դաստիարակության կարևորագույն գործիք (Պիգմալիոնի էֆեկտ), կամ որպես այս կամ այն գործունեության մեջ սուբյեկտների՝ որպես փոխհամագործակցության գաղափարակիրների պահանջմունքի դրսևորում (Ս.Ա. Կոսաբուցկայա, Օ.Կ.Կրոկինսկայա, Լ.Ս. Նագավկինա), Ես-հայեցակարգի և կյանքի սցենարների ուղեկից գործոն (Է. Բեռն), Ն.Կանտորը դիտարկել է սպասումների երևույթը սոցիալական իրավիճակների հոգեբանության տեսակետից: Սակայն հիմնախնդրի առավել խորը ուսումնասիրման արդյունքում բացահայտվեց, որ սպասումները ունեն կոնկրետ կառուցվածք և ուղղություն, որը հնարավոր է միավորել սպասումների եռասյուն մոդելում:

Հետազոտության նպատակն է բացահայտել երիտասարդների նպատակային դիրքորոշումների առանձնահատկությունները, սոցիալական սպասումների դրսևորման մեխանիզմները և ազդեցությունը ինքնագնահատականի մակարդակի վրա:

Ուսումնասիրության նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **հետազոտական խնդիրները՝**

1. Վերլուծել նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների տեսափորձարարական հիմքերը և կառուցվածքային համակարգը:
2. Բացահայտել այն բաղադրիչները, որոնք հանդես են գալիս որպես նպատակային դիրքորոշումներ երիտասարդների կենսագործունեության ընթացքում:
3. Համեմատել հոգեբանական նմանություններն ու տարբերությունները նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների միջև:
4. Բացահայտել նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների համակարգի բաղադրիչների համահարաբերակցային կապերը, դրանց համահարաբերակցումը ինքնագնահատականի հետ:

5. Բացահայտել հաջողության հասնելու մոտիվացիա ունեցող երիտասարդների և անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցության առանձնահատկությունները:

6. Բացահայտել նվաճան տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցության պայմանավորվածությունը ռեֆլեքսիվության մակարդակով:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը պայմանավորված է ռեֆլեքսիվության մակարդակով:

Հետազոտության օբյեկտը՝ Նպատակային դիրքորոշումները և սոցիալական սպասումները:

Հետազոտության առարկան՝ Երիտասարդների ինքնագնահատականի վրա ազդող նպատակային դիրքորոշումները և սոցիալական սպասումները:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը: Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել մի շարք տեսություններ, որոնք դիտարկում են դիրքորոշման առանձնահատկությունները, նկարագրելով դրանց նշանակությունն ու դերը անձի գործունեության կարգավորման գործում (Դ. Ն. Ուզնաձե, Վ.Ա. Յադով և մյուսները), մասնավորապես՝ դիրքորոշման հիերարխիկ կառուցվածքի տեսությունը (Ա.Գ. Ասմոլով), տեսական պատկերացումներ սպասման և սպասումների մասին Վ. Վրում, Ջ. Ռոտեր, Է, Մ. Լ. Գոմելաուրի: Օ. Կարինայի, Մ. Կիսելևայի և Ն. Շուստովայի «Սպասումների եռամակարադակ հայեցակարգը: Անձի սպասման մոտիվացիոն տեսությունները համահոգեբանական ուսումնասիրությունները Ջ. Ատկինսոն, Դ. Մաք Քլելանդ, Հ. Հեքհաուզեն: «Ես» - կոնցեպցիան ուսումնասիրվել է Ե. Տ. Սոկոլևայի և Վ. Վ. Ստոլինի տեսական հայեցակարգերի ներքո, իսկ ինքնագնահատման բաղադրիչների վերաբերյալ մոտեցումները դիտարկվել են Ռ. Բերնսի տեսական դրույթների օգնությամբ: Տեսական մեթոդաբանական հիմք է հանդիսացել Լոկի և Լաթամի նպատակադրման տեսությունը: Երիտասարդ տարիքի ուսումնասիրման համար հիմք են հանդիսացել երիտասարդության տարիքի հոգեբանական մեկնաբանման մի շարք տեսություններ (Ֆիլիպս, Էրիկ Էրիքսոն):

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

- «Ինքնակառավարման կարողություն» մեթոդիկան (հեղինակ՝ Մ. Պեյսախով),
- «Անձի հավակնությունների մակարդակի բացահայտում» մեթոդիկան (հեղինակ՝ Վ. Կ. Գորբաչևսկի),
- «Նպատակ, միջոց, արդյունք» մեթոդիկան (հեղինակ՝ Ա. Ա. Կարմանով),
- «Նվաճման մոտիվացիայի թեստ (MATS)» (հեղինակ՝ Ա. Մեհրաբյան),
- «Ինքնագնահատականի ախտորոշում» մեթոդիկա (հեղինակներ՝ Տ.Դեմբո, Ս.Յա. Ռուբինշտեյն, Պ.Վ. Յանշին), կլինիկական հարցազրույցի տարրերով

- «Անձնային սպասումներ (ЛиЭкс)» հարցարանը (հեղինակներ՝ Օ. Կարինայ, Մ. Կիսելևա և Ն. Շուստովա),
- Հավաստող գիտափորձի մեթոդ,
- Տվյալների վերլուծության վիճակագրական մեթոդներ:

Աշխատանքի գիտական նորույթը:

1. Դասակարգվել են նպատակային դիրքորոշումների բաղադրիչները և դրանց օրինաչափությունները:
2. Հետազոտությամբ հիմնավորվել է նպատակային դիրքորոշումը և սոցիալական սպասումների՝ ինքնագնահատականի վրա ազդեցության փաստը՝ միջնորդավորված անձի ռեֆլեքսիվության արտահայտվածության գործոնով:
3. Փոխադարձ կապ է արձանագրվել մի կողմից նպատակային դիրքորոշման և սոցիալական սպասումների և մյուս կողմից ռեֆլեքսիվության մակարդակի միջև: Վեր են հանվել նշված հասկացությունների կառուցվածքագործառութային բաղադրիչների փոխադարձ կապերը:
4. Բացահայտվել են երկու վարքային ռազմավարական մոդելներ, որոնք կիրառվում են տարբեր նվաճման մոտիվացիաներով անձանց կողմից բարձր կամ ցածր ռեֆլեքսիվության դեպքում՝ սեփական ինքնագնահատականի մակարդակը պահպանելու համար:

Տեսական նշանակությունը: Իրականացվել է դիրքորոշումների և սոցիալական սպասումների համալիր հետազոտություն, որի արդյունքում բացահայտվել է, որ նպատակային դիրքորոշումները կուռ համակարգ են, որոնք ունեն ընդհանուր ուղղվածություն, չափելի բաղադրիչներ և գործառնական հնարավորություններ: Կատարվել է նպատակային դիրքորոշումների բաղադրիչների համակարգի կառուցում:

Գործնական նշանակությունը: Ատենախոսության հետազոտության արդյունքները կարևոր են սոցիալական կանխատեսումների ոլորտում, կարող են հիմք ծառայել երիտասարդների զարգացման քաղաքականության մշակման համար, ինչպես նաև կարող են օգտագործվել սոցիալական աջակցության և երիտասարդության պաշտպանության ծրագրերի առաջարկման համար: Ստացված արդյունքները և մեթոդական նյութը կարող են հիմք ծառայել սոցիալական սպասումների խնդիրների հետագա տեսական և գործնական հետազոտությունների համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Պաշտպանության են ներկայացվում գիտական գործունեության հետևյալ արդյունքները՝

1. Նպատակային դիրքորոշումը գործողության կանխատեսվող արդյունքին հասնելու պատրաստականությունն է, որը դրսևորվում է նպատակին համապատասխան ընկալելու, գնահատելու և գործելու պատրաստականության մեջ:
2. Սոցիալական սպասումները հասարակության պահանջների և նորմատիվ վերաբերմունքի տարրեր են, որոնք ազդում են սոցիալական վարքագծի վրա: Դրոնք արժեքային նորմատիվ կարգավորիչներ են, ինչպես նաև անհատի հույսերն ու գաղափարները հասարակության և սոցիալական նորմերի վերաբերյալ:

3. Նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող անձինք ունենում են տարբերվող նպատակային դիրքորոշումներ և սոցիալական սպասումներ: Դա մասնավորապես ակնառու է դառնում գործունեության բարդության ընտրության, նոր գործունեություն ծավալելու, պատասխանատվություն ընդունելու, արդյունքների կանխատեսման, հեռահար կամ մոտակա նպատակներ դնելու գործողություններում:

4. Ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցության գործում որոշիչ նշանակություն է ստանում նպատակային դիրքորոշումների ռեֆլեքսիվ բաղադրիչը: Մասնավորապես նվաճման տարբեր մոտիվացիաների դեպքում սեփական բարձր ինքնագնահատականը պահպանելու համար անձը կիրառում է հակադիր վարքային ռազմավարություններ:

5. Էմպիրիկորեն հաստատվել են այն կապերը, որոնք առկա են երիտասարդների նպատակային դիրքորոշումների, սոցիալական սպասումների, ռեֆլեքսիվության և ինքնագնահատականի միջև: Տարբերվում են նվաճման տարբեր մոտիվացիայով ռեֆլեքսիվության տարբեր մակարդակներով երիտասարդների նպատակային դիրքորոշումներն ու սոցիալական սպասումները՝ երբեմն կրելով տրամագծորեն հակառակ բնութագիր և ապահովելով անձի կոնկրետ վարքային ռազմավարությունը:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության ընթացքը պարբերաբար ներկայացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի նիստերում:

Հետազոտության արդյունքները զեկուցվել են 2016 թ. ապրիլի 25-29 ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան գիտական նստաշրջանում, 2015թ. միջազգային մասնակցությամբ «Ցանցային փոխգործակցությունը որպես կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման ձև» խորագիրը կրող համառուսաստանյան գիտագործնական համաժողովում, 2014թ. ԵՊՀ «Գիտության և կրթության զարգացման ժամանակակից հիմնախնդիրները» գիտաժողովում, 2013թ. ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովում, 2013թ. հուլիսի 1-5, ՀՊՄՀ, «Անընդհատ պրակտիկայի արդիականացումը և կազմակերպման մեխանիզմների ներդրումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում» խորագրով միջազգային գիտաժողովում: Հետազոտության ընթացքը և արդյունքները պարբերաբար զեկուցվել են ՀՊՄՀ ԿՀՍ ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի նիստերում (համապատասխանաբար՝ 27.12.2021 N 6, 27.01.2022 N 7, 22.03.2022 N 9 և 10.05.2022 N 10 նիստերում):

Ատենախոսության տեսական և փորձարարական մասերի հիմնական բովանդակությունը արտացոլված է հեղինակի 12 հոդվածներում, որոնք տպագրվել են ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈԿ) կողմից երաշխավորված գրախոսվող ամսագրերում, ինչպես նաև ՌԴ ժողովածուներում և պարբերականներում, տարբեր գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, 2 աղյուսակից, 16 նկարից, եզրակացություններից, 186 անուն գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 175 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախուսության ներածության մեջ ցույց է տրված թեմայի արդիականությունը, ներկայացված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ձևակերպված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության իրականացման փուլերն ու մասնակիցների համակազմը, հետազոտության հուսալիությունը, հավաստիությունն ու փորձաքննությունը գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների գիտական հայեցակարգերի տեսական վերլուծություն» գլխում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների երևույթի վերաբերյալ հոգեբանական գրականության մեջ առկա տեսական և մեթոդաբանական մոտեցումներն ու հայեցակարգերը, դիտարկվում են դիրքորոշում և սպասում հասկացությունների հոգեբանական մեխանիզմները, առանձին բաղադրիչները: Առաջին՝ «Նպատակային դիրքորոշումները՝ որպես սոցիալ-հոգեբանական հետազոտության մեթոդական հիմք» ենթագլխում ներկայացվում են Դ. Ուզնաձեի, Ա.Ասմոլովի, Դ. Ա. Լեոնտևի, Ա. Գ. Շմելյովի, Լ. Ֆեստինգերի, Գ. Բոնների, Վ. Յադովի, Օ. Պոնֆիլովի, Ու. Թոմասի ու Ֆ. Զնանեցկու տեսական հայեցակարգերը:

Նույն գլխի 2-րդ՝ «Նպատակային դիրքորոշումների մակարդակը, տեսակները և դրսևորման բաղադրիչները» ենթագլխում ներկայացվում է նպատակային դիրքորոշումների՝ որպես համակարգի միջին բաղադրիչի հոգեբանական բնութագիրը, համագործակցությունը մյուս բաղադրիչների հետ: Ներկայացվում է Ա.Ասմոլովի դիրքորոշման հիերարխիկ մոդել, որտեղ վերջինս ներկայացվում է որպես գործունեության կայունացման մեխանիզմի մասին մոտեցումը, որում նպատակային դիրքորոշումները միջին օղակ են իմաստային և գործառնական դիրքորոշումների միջև: Ներկայացված է նաև նպատակային դիրքորոշման արևելյան մեկնաբանությունը, տրված են հասկացության ընկալման նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ և չորրերդ ենթագլուխները՝ համապատասխանաբար «Սոցիալական սպասումները՝ որպես սոցիալ-հոգեբանական կատեգորիա» և «Սոցիալական սպասումների եռամակարդակ մոդելը՝ որպես հետազոտության տեսամեթոդաբանական հիմք» բացահայտում են սոցիալական սպասումների սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրը, դրանց սահմանման մեթոդաբանական հիմնախնդրները, ընկալման տեսական

մոտեցումները: Մասնավորապես ներկայացված են սոցիալական սպասումների վերաբերյալ արևելյան և ռուս հեղինակների մոտեցման առանձնահատկությունները, դրանց ընդհանուր եզրերը: Իրականացված է սպասման հայեցակարգի բաղադրիչային վերլուծություն, որի արդյունքում սպասումները ներկայացված են 3 մակարդակներում՝ սպասումներ միջանձնային հարաբերություններում, սպասումներ կենսական հեռանկարներից և սպասումներ սեփական անձից: Ինչպես նաև տրվում են սպասումների կառուցվածքային բաղադրիչները:

Ատենախոսության 2-րդ՝ «Երիտասարդության շրջանում նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ձևավորման և դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» գլխում ներկայացված են երիտասարդ տարիքի սոցիալ հոգեբանական հիմնախնդիրները, երիտասարդության՝ որպես սոցիալական տարիքի վերաբերյալ հեղինակների մոտեցումները: Սույն գլխի «Երիտասարդությունը՝ որպես սոցիալ-հոգեբանական տարիք» խորագրով առաջին ենթագլխում՝ ներկայացված է երիտասարդության տարիքային պարբերացման հիմնախնդիրը, դրանում առկա մշակութային և սոցիալական ասպեկտները, երիտասարդների սոցիալ-հոգեբանական բնութագրերը, սոցիալական հասունության հիմնախնդիրը, վերջինիս չափման բաղադրիչները, երիտասարդության տարիքի հոգեբանական ճգնաժամ երևույթը և դրա դրսևորման ձևերը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Ինքնագնահատականի առանձնահատկությունները երիտասարդության տարիքի սկզբում և ավարտին», ներկայացնում է ինքնագնահատականի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները, ինքնագնահատականի քանակական և որակական փոփոխության առանձնահատկությունները և դրսևորման ձևերը երիտասարդության տարիքի սկզբում և ավարտին, հետևում է ինքնագնահատականի փոփոխության դինամիկայի ընթացքին, երիտասարդի վարքում և հարաբերություններում դրանց ունեցած դերին, վերլուծության են ենթարկված այս տարիքում ինքնագնահատակնի տարբեր տեսակների վերաբերյալ տեսական մոտեցումները:

Երրորդ ենթագլուխը կրում է «Սոցիալական ժամացույցը երիտասարդության տարիքում» խորագիրը, այն ներկայացնում է երիտասարդների նկատմամբ սոցիալ-մշակութային սպասելիքները, պահանջները, դրանց՝ երիտասարդի անձի, վարքի և հարաբերությունների վրա ունեցած հետևանքների առանձնահատկությունները: Սույն ենթագլխում տրվում են երիտասարդների հանդեպ հասարակության սպասելիքների և վարքային մոդելների համակարգը, ինքնագնահատակնի վրա դրանց ունեցած ազդեցությունը, և դրանցով պայմանավորված նպատակների և նպատակային դիրքորոշումների կառուցումը:

Ատենախոսության երրորդ գլուխը «**Երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցության փորձարարական ուսումնասիրություն**»-ն է: Այստեղ ներկայացված են իրականացված հետազոտությունների ողջ ընթացքը և ստացված արդյունքների վերլուծությունը, որոնց նշանակալի արդյունքները զետեղված են բազմաթիվ աղյուսակներում և գծապատկերներում:

Հետազոտությանը մասնակցել են ընդհանուր առմամբ գիտափորձին մասնակցել են 18-35 տարեկան 275 երիտասարդներ, որոնցից 132-ը մինչև 18-25 տարեկան, իսկ 143-ը՝ 26-35 տարեկան երիտասարդների են: Հետազոտության մասնակիցների 68%-ը կազմում էին իգական սեռի ներկայացուցիչները, իսկ մնացած 32%-ը՝ արական սեռի ներկայացուցիչները:

Մեթոդներն ընտրվել են առկա գրականության հիման վրա կատարված վերլուծությունների արդյունքում, որոնք ուղղղակիորեն կամ միջնորդավորված կապված են երիտասարդների նպատակային դիրքորոշումների, սոցիալական սպասումների կամ դրանց ենթակառուցվածքների հետ: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը բարձրացնելու նպատակով ընտրվել են ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ, որոնք մեթոդաբանական առումով փոխլրացնում և ճշգրտում են միմյանց: Տրիանգուլյացիան ենթադրում է քանակական և որակական մեթոդների համակցությամբ, որպես երրորդ կողմ վկայակոչելու հետազոտության նպատակամետ պլանը, որտեղ տրամաբանությունը հիմնված է այն փաստի վրա, որ մեկ քանակական կամ որակական վերլուծության մեթոդը երբեք չի կարող համարժեք կերպով լուծել պատճառահետևանքային «մրցակցող» գործոնների խնդիրը:

Հավաստող գիտափորձի արդյունքները ներկայացված են՝ ըստ առաջադրված խնդիրների հերթականության, ինչը դյուրին է դարձնում ծավալուն նյութի վերլուծությունը և ընկալումը:

Նախևառաջ երիտասարդների նպատակային դիրքորոշումների 1-ին գլխավոր բաղադրիչի որոշման համար տեսական վերլուծությունների և անհատական հարցազրույցների արդյունքում պարզ դարձավ, որ այդպիսի առաջնային օղակ, կամ նպատակային դիրքորոշումների համար վեկտոր որոշակիորեն հանդիսանում է նվաճման մոտիվացիան, քանի որ հենց նման մոտիվացիայի տարբեր բևեռների (հաջողության հասնելու մոտիվացիա և ձախողումից խուսափման մոտիվացիայի) ազդեցության տակ է անձը ծավալում իր կենսագործունեությունը, դնում զանազան նպատակներ և ռեսուրսներ իրականացնում դրանց հասնելու համար: Դրանով է պայմանավորված, թե ինչու երկու անձինք նույն նպատակը դնելիս ունենում են տարբեր արդյունքներ՝ հաջողություն կամ ձախողում: Այդ իսկ պատճառով իրականացվել են հետազոտության մասնակիցների նպատակային դիրքորոշումների ուղղվածության ուսումնասիրությանը նվիրված մեթոդիկաներ:

Հաջողության հասնելու դրդապատճառը հասկացվում է որպես մի ուժ, որը մարդու մոտ առաջացնում է որոշակի գործողություններ, ինչը, ելնելով իր

սպասելիքներից, կարող է հանգեցնել հաջողության: Սա դրսևորվում է որոշակի ուղղությամբ, ինտենսիվությամբ և գործունեության համառությամբ: Անհաջողություններից խուսափելու մոտիվացիայի ներքո հասկանում են տարբեր սխալներից և ձախողումներից խուսափելու մշակված մեխանիզմը. այսինքն, անհաջողության դրդապատճառ ունեցող անձի համար ամենակարևորը սխալներ թույլ չտալն է, երբեմն նույնիսկ նախնական իմաստալից նպատակի փոխակերպմն է:

Հաջորդ մեթոդիկայի օգնությամբ բացահայտվել են տարբեր նվաճման մոտիվացիա ունեցող երիտասարդների նպատակային դիրքորոշումների բաղադրիչների դրսևորման քանակական առանձնահատկությունները:

Գծապատկեր 2. Նպատակային դիրքորոշումների մոտիվացիոն բաղադրիչը նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների շրջանում



Ինչպես կարող ենք տեսնել գծապատկերից, որքան բարձր է նվաճման մոտիվացիան, այնքան բարձր են նպատակային դիրքորոշման բաղադրիչները: Բացառություն է կազմում միայն խուսափման դրդապատճառը, որը օրինաչափ է և հնարավոր է մեկնաբանել անհաջողության խուսափման դրդապատճառի հիմնական առանձնահատկություններով:

Մոտիվացիոն բաղադրիչի մեջ ներառված են 6 դրդապատճառներ, որոնք այս կամ այն կերպ պայմանավորում են անձի նպատակադրման առանձնահատկությունները, դրանց հասնելու եղանակների որոշումը և իրականացումը:

Հաջորդիվ հետազոտության են ենթարկվել երիտասարդների սոցիալական սպասումները: Վերջիններս ներկայացված են երեք բլոկներում՝ համապատասխանաբար սպասումներ միջանձնային հարաբերություններում, սպասումներ կենսական հեռանկարներում և սպասումներ սեփականա անձնային ներուժից:

Բոլոր կատեգորիաներում անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող երիտասարդների սպասումները զիջում են մյուս երկու խմբերի ցուցանիշներին, ինչը չենք կարող պնդել մյուս կատեգորիաների մասին:

Գծապատկեր 7.
Սոցիալական սպասումները նվաճման տարբեր մոտիվացիայով երիտասարդների շրջանում



ՀՀՄ – Հաջող.հասնելու մոտիվացիա
ԱՆՄ – Անորոշ նվաճման մոտիվացիա
ԱԽՄ – Անհաջող. խուսափ. մոտիվացիա

Մասնավորապես, «կենսական հեռանկարների սպասումների» բլոկը առավել արտահայտված է անորոշ նվաճման մոտիվացիա ունեցող երիտասարդների մոտ, քան հաջողության մոտիվացիա ունեցող երիտասարդների մոտ

Սպասումները լավատեսակն են առաջին և երկրորդ մոտիվացիոն խմբերում, մինչդեռ հոռետեսական են անհաջողությունից խուսափման մոտիվացիայով երիտասարդների շրջանում (տե՛ս գծապատկեր 8.):

Սպասումները ճկուն են նվաճման անորոշ մոտիվացիայով երիտասարդների մոտ և ամենացածրն են անհաջողությունից խուսափման

Աղյուսակ 1.

Ռեֆլեքսիվ և ոչ ռեֆլեքսիվ անձանց տարբերությունները անհաջողությունից խուսափման մոտիվացիայի դեպքում

	Ռեֆլեքսիվ	**Ոչ ռեֆլեքսիվ**
Նպատակային դիրքորոշումներ	▪ Չափավոր բարդություն ▪ Ներքին դիրքորոշում ▪ Գործունեության կատարում մինչև ավարտը ▪ Որոշման ընդունում ▪ Պլանավորման հստակ կարողություններ ▪ Մանր և չափելի նպատակներ դնելու միտում ▪ Հակասությունների վերլուծություն և հետադարձ կապ (շտկում) ▪ Ներքին լոկուս ▪ Մրցակցության դիրքորոշում ▪ Գործունեությունն ուղղված է և միջոցներին և արդյունքին	▪Շատ բարդ կամ հեշտ նպատակներ ▪Գործունեության փոփոխության դիրքորոշում ▪Խուսափում է պատասխանատվությունից և որոշումներ կայացնելուց ▪Մեծ և անիրատեսական նպատակներ դնելու միտում ▪Արտաքին լոկուս ▪Խուսափում է մրցակցությունից ▪Գործունեությունն ուղղված է արդյունքին
Սոցիալական սպասումներ	▪ Չափավոր սպասումներ կամ **ցածր սպասումներ** ▪ Դրական ▪ Կոնկրետ թիրախային և հաստատագրված ▪ Իրատեսական և չափելի ▪ Բարձր սպասումներ սեփական անձից	▪Բարձր սպասումներ ▪Անիրատեսական ▪Նեգատիվ ▪Դիֆուզ ▪Բարձր սպասումներ կենսական հեռանկարներից և այլ անձանցից
Ինքնագնահատական	▪ Ներքին ▪ Բարձր միտումով	▪Արտաքին ▪Ցածր

մոտիվացիա ունեցող երիտասարների մոտ:

Սպասումները իրատեսական են նվաճման անորոշ մոտիվացիայով երիտասարդների մոտ և խիստ անիրատեսական են անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող երիտասարների շրջանում:

Սպասումները կոնկրետ են առաջին երկու խմբերում և խիստ դիֆուզ են անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող անձանց մոտ:

Հարցվողների հետ անհատական հարզացրույցի ընթացքում բացահայտվեցին վարքային ռազմավարություններ, որոնք ուղղված են նպատակադրման եղանակներին, որոնց հիմնական նպատակն է պահպանել ինքնագնահատականի բարձր կամ չափազանց բարձր մակարդակը:

Ռազմավարություն 1. Բարձր ռեֆլեքսիվությամբ անհաջողության մոտիվացիա ունեցող երիտասարդները վերահսկում են իրենց սպասումները՝ դրանք հասցնելով նվազագույնի՝ անկախ նախորդ հաջողություններից: Այս բացասական ակնկալիքներն օգտագործվում են իրավիճակների վերաբերյալ անձի անհանգստությունը մեղմելու համար՝ դրդելով նրան պլանավորել ուղիներ՝ խուսափելու վատ արդյունքների հնարավորություններից: Սակայն պահպանելով խիստ բարձր սպասումները սեփական պոտենցիալից՝ դրանով հանդերձ նրանք դնում են նպատակներ, որոնց հասնելուն վստահ են, պլանավորում են դրանց հասնելու հստակ քայլերը, կազմում են անհաջողության դեպքում այլընտրանքային ելքեր:

Ռազմավարություն 2. Հաջողության հասնելու մոտիվացիայով ցածր ռեֆլեքսիվությամբ անձը ունենում է խիստ բարձր սպասումներ այլ անձանցից, իրավիճակից և միջավայրից, դրանք դրական են և հաճախ ոչ իրատեսական, պլանավորում է միայն մոտակա քայլերը, չունի հստակ հեռանկարներ, նախընտրում է ոչ շատ բարդ նպատակներ, քանի որ դրանք ապահովում են նրա հաջողությունը, չունեն այլընտրանքային պլաններ հնարավոր անհաջողության համար:

Ռեֆլեքսիվության, սոցիալական սպասումների և նպատակային դիրքորոշումների միջև համահարաբերակցային կապերը:

	Ռեֆլեքսիվություն
Հաջողության մոտիվացիա	0.51098
Նպատակ	0.57485
Միջոց	0.31275
Արդյունք	-0.32569
Ինքնագնահատական	0.57651
Ներք. դրդ.	-0.00677
Կոգն. դրդ.	0.39556
Խուս.դրդ.	0.43805
Մրց.դրդ.	0.56966
Գործ.փոփ.դրդ.	-0.36145
Ինքնահարգանք	0.31309
Արդ/ Նշ.	0.53506
Բարդություն	0.67516
Կամ.ճիգ	0.56046
Նվաճ.արդ.գնահ.	0.40749
Ներուժի գն.	-0.00861
Ջանք մոբ.	0.59655
Արդ. Սպ.մակ	0.55377
Արդ.օրին	0.45506
Նախաձեռն	0.50576
Հակաս.վերլ.	0.43805

	Ռեֆլեքսիվություն
Կանխատեսում	0.60569
Նպատակադրում	0.64105
Պլանավորում	0.60765
Որակի գն	0.54656
Որոշման ընդ.	0.51506
Ինքնավերահսկում	0.57553
Կոռեկցիա	0.56747
Ինքնակառավարում	0.55896
Պուլնեգ	0.45676
Ընկ/ռիգ	0.56568
Իրմանիր.	0.58987
Կոնկ/դիհ	0.69969
Ապասում	0.35665
Ռեֆլեքսիվություն	1

Գծապատկեր 17. Նպատակային դիրքորոշումների, սոցիալական սպասումների և ինքնագնահատականի համահարաբերակցություն





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձարարական հետազոտության արդյունքների և տեսական վերլուծությունների ամփոփումները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք եզրակացություններ, որոնք արվել են հետազոտական տվյալների քանակական՝ որպես հետազոտվող երևույթ–ների միջև օբյեկտիվ հարաբերություններ արտահայտող նշանների, և որակական՝ վերլուծությամբ ստացված արդյունքների և հոգեբանական տեսական ուսումնասիրությունների մեթոդների զուգակցմամբ:

1. Նպատակային դիրքորոշումը գործողությունների ակնկալվող նպատակին հասնելու պատրաստակամությունն է, որը հաճախ ակտուալացվում է գիտակցված, կանխատեսելի նպատակի պատկերով: Դրանք ապահովում են նպատակին հասնելը առավելագույն հավանականությունը և արդյունավետությունը: Ապագա նպատակի պատկերը սահմանում է գործողության կառուցման միայն ընդհանուր ուղղությունը, մինչդեռ ցանկացած գործողության կատարողական մասը որոշվում է իրավիճակի հատուկ պայմաններով: Նպատակային դիրքորոշումներն միջանկյալ դեր են կատարում իմաստային և օպերացիոնալ դիրքորոշումների միջև: Դրանք մյուս երկու բաղադրիչների հետ միասին ապահովում են անձի ողջ գործունեության ուղղվածությունը, պայմանավորում են նպատակին հասնելու ողջ գիտակցված գործընթացը և որոշում են նպատակին հասնելու ուղիներն ու եղանակները: Նպատակային դիրքորոշումների կարևորագույն բաղադրիչը նպատակադրումն է:

2. Սոցիալական սպասումները օբյեկտիվ կողմնորոշումներ են, դիրքորոշումների, գնահատականների, համոզմունքների, վարքի կարծրատիպերի, գիտելիքների տարրերի, մտադրությունների ընդհանրությունն է, որոնք կիսում են անձինք սպասվող իրադարձությունների վերաբերյալ, որն ապահովում է դրանց նկատմամբ անհատի իմացական, հուզական և վարքային պատրաստվածությունը: Սոցիալական սպասումները բազմաշերտ կառույցներ են, որոնք դրսևորվում են անձի կյանքի և փոխհարաբերությունների տարբեր ոլորտներում: Դրանք արտահայտվում են միջանձնային հարաբերություններում, կյանքի կենսական հեռանկարների մոդելավորման գործընթացում և սեփական անձի կենսական ներուժի գնահատման պրոցեսում:

3. Նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների կառուցվածքային բաղադրիչների քանակական դրսևորումները նվազում են նվաճման մոտիվացիայի նվազմանը զուգընթաց: Հաջողության հասնելու մոտիվացիա ունեցող երիտասարդների նպատակային դիրքորոշումներն ու սոցիալական սպասումներն ունեն ավելի բարձր արտահայտվածություն, քան անհաջողության մոտիվացիա ունեցող երիտասարդներինը: Նվաճման անորոշ մոտիվացիա ունեցող երիտասարդների նպատակային դիրքորոշումներն ու սոցիալական սպասումները չունեն նման հստակ պայմանավորվածություն. դրանք փոփոխվում են իրավիճակին համընթաց:

4. Դրական համահարաբերակցություն կա հաջողության հասնելու մոտիվացիայի, սոցիալական սպասումների և նպատակային դիրքորոշումների որոշ բաղադրիչների միջև: Դրական համահարաբերակցություն կա նմանապես ռեֆլեքսիվության և հաջողության հասնելու մոտիվացիայի միջև:

5. Հաջողության հասնելու մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականը բարձր է անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի համեմատությամբ: Սակայն առավել բարձր ինքնագնահատական ունեն նվաճման անորոշ մոտիվացիա ունեցող երիտասարդները: Դա պայմանավորված է նրանց ճկունությամբ, ռեֆլեքսիվության մակարդակով և իրավիճակում արագ ադապտացվելու կարողությամբ:

6. Ռեֆլեքսիվությունը՝ որպես միջանկյալ գործոն մեծ ազդեցություն ունի անձի նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների վրա: Դրա ազդեցությունն ավելի ակնհայտ է դառնում ինքնագնահատականի վրա վերոնշյալ գործոնների ազդեցության դեպքում: Հաջողության հասնելու մոտիավացիայով ցածր ռեֆլեքսիվությամբ անձը իր բարձր ինքնագնահատականը պահպանելու համար օգտագործում է «ռազմավարական լավատեսություն» ռազմավարությունը, իսկ անհաջողությունից խուսափման մատիվացիայով բարձր ռեֆլեքսիվությամբ անձը նույն նպատակով որպես վարքային ռազմավարություն կիրառում է «պաշտպանական հոռետեսություն» ռազմավարությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Հարությունյան Ն. Ս. Ռեֆլեքսիվ և ոչ ռեֆլեքսիվ երիտասարդների առանձնահատկությունները հաջողության հասնելու մոտիվացիայի տարբեր մակարդակների դեպքում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, N 1, 2024, էջ 236-245:

2. Հարությունյան Ն. Ս. Նպատակային դիրքորոշում» հասկացության օպերացիոնալիզացիան, կառուցվածքը և հիմնական բաղադրիչները, Գիտական Արցախ № 4 (19), 2023. 148-158 էջ; DOI: 10.52063/25792652-2023.4.19-148:

3. Հարությունյան Ն. Ս. Ինքնագնահատականի մակարդակի և համաչափության առանձնահատկությունները երիտասարդության տարիքում, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1/2023, ISSN 1829-4375, էջ 244-255:

4. Арутюнян Н. С., Психологические особенности социальных часов в период молодости, Традиции и новации в профессиональной подготовке и деятельности педагога, V Международной научно-практической конференция, Выпуск 21, Тверь 2023, ISBN 978-5-7609-1830-7, ст. 313-318.

5. Harutyunyan N. "Comparative Theoretical Analysis Of Expectations In Different Psychological Concepts", Main Issues Of Pedagogy And Psychology, vol. 22 No. 2, Yerevan (2022), DOI: 10.24234/miopap.v22i2.439.p. 43-54.

6. Арутюнян Н.С. Зависимость мотивов достижения успеха и избегания неудачи от уровня рефлексивности, Bulletin Of The Medical Institute After Mehrabyan, vol. 12, 2022, 195-199 էջ, Երևան, DOI: 10.53821/1829040X-2022.12-195.

7. Арутюнян Н.С. Келоян М.А., "Половозрастные особенности целевых установок, молодежи" Bulletin Of The Medical Institute After Mehrabyan, vol. 12, 2022, Երևան, DOI: 10.53821/1829040X-2022.12-227., էջ 227-232:

8. Арутюнян Н.С, Карапетян В.С., История возникновения и современное понимание феномена ожидания, ЧФ: Социальный психолог, 2016 Выпуск N1 (31), 2016, ст. 38-44.

9. Арутюнян Н.С. Особенности влияния сетевого взаимодействия на ожидания первокурсников. Сборник материалов Всероссийской научно-практической конференции с международным участием «Сетевое взаомодействие как форма реализации государственной плитики в образовании». Челябинск, 2015, Ст. 310-313.

10. Հարությունյան Ն.Ս. Առաջին կուրսեցիների սպասումների բովանդակային առանձնահատկությունները /Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ/: ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. - Եր.: ԵՊՀ հրատ., 2014. - 492 էջ. էջ 326-329:

11. Հարությունյան Ն. «Չափահասների ռեֆլեքսիվության և սպասումների հարաբերակցումը» Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Մանկավարժ 2013, էջ 143 – 146:

12. Арутюнян Н.С., Саргсян В.Ж., Малоян З.А., Жизненные цели в восприятии студентов,.Материалы международной конференции “Модернизация непрерывной педагогической практики и внедрение механизмов организации в системе высшего педагогического образования ”Ереван, 2013, с. 229-235.

АРУТЮНЯН НАИРА САМВЕЛОВНА

ВЛИЯНИЕ ЦЕЛЕВЫХ УСТАНОВОК И СОЦИАЛЬНЫХ ОЖИДАНИЙ НА САМООЦЕНКУ МОЛОДЕЖИ

Диссертация на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.03-«Социальная психология».

Защита диссертации состоится 18-го июля 2024 года в 11:30 часов на заседании специализированного совета по психологии 064 Комитета по высшему образованию и науке - РА МОНКС по присуждению учёных степеней в Армянском Гасударственном педагогическом Университете имини Хачатура Абовяна по адресу: 0010, г, Ереван, ул.Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В последнее время специалисты различных областей все чаще поднимают вопрос о социально-психологических проблемах молодежи XXI века и даже об уникальном кризисе молодежи. Социальные ожидания, которые включают социальные нормы, культурные стандарты и межличностные сравнения, служат ориентирами, с помощью которых люди оценивают свое собственное поведение, достижения и самооценку. Взаимосвязь между постановкой целей молодежи, социальными нормами и самооценкой имеет важные последствия для общества, в частности, то, что молодежь со здоровой самооценкой с большей вероятностью будет ставить амбициозные цели и уверенно достигать их. Поощряя положительную самооценку, общество способствует реализации потенциала молодых людей к инновациям, творчеству и внесению значительного вклада в различные области. Когда молодые люди чувствуют себя способными достичь своих целей, несмотря на социальное давление, это способствует возникновению чувства автономии и свободы, что, в свою очередь, способствует социальной сплоченности, поощряя разнообразие точек зрения, сотрудничество и взаимное уважение внутри различных социальных групп.

Социально-экономический статус молодежи часто противоречит способности ставить и достигать цели, а также доступу к ресурсам и системам поддержки. Устраняя факторы, влияющие на самооценку молодых людей, такие как социальные различия и системные барьеры, общество может работать над сокращением неравенства и содействием социальной мобильности. В целом, создание благоприятной среды, которая поощряет здоровую постановку целей и повышает самооценку молодых людей, помогает создать более стабильное, сплоченное и процветающее общество.

Цель исследования - выявить особенности целевых установок молодежи, механизмы социальных ожиданий и их влияние на уровень самооценки.

Гипотеза исследования: Предполагается, что влияние целевой установки и социальных ожиданий на самооценку молодых людей с разной мотивацией достижения определяется уровнем рефлексивности.

Основные задачи исследования:

1. Анализировать теоретические и экспериментальные концепций структурной системы целевых установок и социальных ожиданий.
2. Выявить компоненты, служащие целевыми установками в жизни молодых людей.
3. Сравнить психологические сходства и различия между целевыми установками и социальными ожиданиями молодых людей с разной мотивацией достижения.
4. Выявить корреляции между целевыми установками и компонентами социальных ожиданий, их корреляцию с самооценкой.
5. Выявить особенности влияния целевых установок и социальных ожиданий на самооценку молодежи, мотивированной на достижение успеха, и молодежи, мотивированной на избегание неудачи.
6. Выявить влияние целей и социальных ожиданий на самооценку молодых людей с различной мотивацией достижения на уровне рефлексивности.

Научная новизна исследования: Классифицированы и операционализированы компоненты целевых установок и их закономерности. В ходе исследования были обоснованы целевая установка и факт влияния социальных ожиданий на самооценку, опосредованных фактором выраженности индивидуальной рефлексивности. Выделены взаимосвязи между структурными и функциональными компонентами этих понятий. Выявлены две поведенческие стратегические модели, которые используются индивидами с различной мотивацией достижения, с высокой или низкой рефлексивностью, для поддержания уровня собственной самооценки.

Теоретическая и практическая значимость исследования. Проведено комплексное исследование установок и социальных ожиданий, в результате которого выявлено, что целевые установки представляют собой жесткую систему, имеющую общее направление, измеримые компоненты и оперативные возможности. Осуществлено построение системы компонентов целевых позиций. Результаты диссертационного исследования имеют важное значение в области социального прогнозирования, могут служить основой для разработки политики развития молодежи, а также могут быть использованы для рекомендации программ социальной помощи и защиты молодежи. Полученные результаты и методический материал могут послужить основой для дальнейших теоретических и практических исследований проблем социальных ожиданий.

Структура диссертации: Диссертация состоит из введения, 3 глав, 2 таблиц, 16 рисунков, заключения, библиографии из 186 наименований и приложений. Общий объем работы составляет 175 страниц.

Диссертация была напечатана в трёх экземплярах.

По теме диссертации опубликовано 12 статей.

NAIRA HARUTYUNYAN

THE INFLUENCE OF GOAL-ATTITUDES AND SOCIAL EXPECTATIONS ON YOUNG-ADULTS' SELF-ESTEEM

Thesis for the degree of candidate of psychological sciences in the specialty 19.00.03 "Social psychology".

The defence of dissertation will take place on 18th of july, 2024, at 11:30 o'clock at a meeting of the specialized council on psychology 064 of the Higher education and science committee MESCS RA for conferring scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan at the adress: 0010, Yerevan, st. Tigran Mets 17.

ABSTRACT

Actuality: Recently, specialists in various fields are increasingly raising the question of the socio-psychological problems of youth in the 21st century and even the unique crisis of youth. Social expectations, which include social norms, cultural standards, and interpersonal comparisons, serve as benchmarks by which people evaluate their own behavior, achievement, and self-worth. The relationship between youth goal setting, social norms, and self-esteem has important implications for society, including that youth with healthy self-esteem are more likely to set ambitious goals and achieve them with confidence. By promoting positive self-esteem, society helps young people realize their potential to innovate, be creative and make significant contributions in a variety of fields. When young people feel capable of achieving their goals despite social pressure, it promotes a sense of autonomy and freedom, which in turn promotes social cohesion by encouraging diversity of viewpoints, cooperation and mutual respect within different social groups.

Youth's socioeconomic status often conflicts with their ability to set and achieve goals, as well as their access to resources and support systems. By addressing factors that impact young people's self-esteem, such as social disparities and systemic barriers, societies can work to reduce inequality and promote social mobility. Overall, creating a supportive environment that encourages healthy goal setting and improves young people's self-esteem helps create a more stable, cohesive and prosperous society.

The objective of the research: The purpose of the research is to identify the characteristics of young people's goal-attitudes, the mechanisms of social expectations and their impact on the level of self-esteem.

Hypothesis of the research:

It is assumed that the influence of goal attitude and social expectations on the self-esteem of young people with different achievement motivation is determined by the level of reflexivity.

Main tasks of the research are:

1.Analyze the theoretical and experimental concepts and structural system of goal-attitudes and social expectations.

2. Describe components that serve as goal-attitudes in the life of young people.

3. Compare the psychological similarities and differences between the goal-attitudes and social expectations of young people with different achievement motivation.

4.Identify correlations between goal-attitudes and components of social expectations, their correlation with self-esteem.

5. Determine the features of the influence of goal-attitudes and social expectations on the self-esteem of youth motivated to achieve success and youth motivated to avoid failure.

6. Establish the influence of goals and social expectations on the self-esteem of young people with different achievement motivation at the level of reflexivity.

Scientific novelty of the research:

1. The components of goal attitudes and their patterns are classified. From the point of view of psychology, the goal position is understood as the subject's readiness to do, first of all, what corresponds to the goal set for him, which arises after accepting a certain task. In the course of the study, the goal attitude and fact of the influence of social expectations on self-esteem, mediated by the factor of the severity of individual reflexivity, were substantiated. The relationships between the structural and functional components of these concepts are highlighted. Two behavioral strategic models have been identified that are used by individuals with different achievement motivation with high or low reflexivity to maintain the level of their own self-esteem.

Theoretical and pracatical significance. A comprehensive study of attitudes and social expectations was conducted, as a result of which it was revealed that goal attitudes are a rigid system that has a common direction, measurable components and operational capabilities. The construction of the system of components of goal positions has been carried out. The results of the dissertation research are important in the field of social forecasting, can serve as a basis for developing youth development policies, and can also be used to recommend social assistance and youth protection programs. The obtained results and methodological material can serve as a basis for further theoretical and practical researches of the problems of social expectations.

Structure of the thesis.

It consists of an introduction, 3 chapters, 2 tables, 16 figures, conclusions, a 186-name bibliography and appendices. The total volume of the work is 175 pages.

The dissertation was printed in three copies.

Twelve articles have been published on the subject of the thesis.